



"ՍՕՍ-ԱՈՒԴԻՏ" ՍՊԸ
"SOS-AUDIT" LTD

Անկախ աուդիտորական եզրակացություն № 14

«Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվեկազմի տարվա ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ

Ներկայացվում է «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության ղեկավարությանը

Մեր կողմից իրականացվել է «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կից ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, որոնք ներառում են 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվապահական հաշվեկշիռը, նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և կից ծանոթագրությունները:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է Հայաստանի Հանրապետության Հաշվապահական Հաշվառման Ստանդարտների համաձայն ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ՝ զերծ խարդախության կամ սխալների արդյունքում առաջացած էական խեղաթյուրումներից:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մենք պատասխանատու ենք Աուդիտի Միջազգային Ստանդարտներին համապատասխան մեր կողմից իրականացված աուդիտի հիման վրա նշված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր արտահայտած կարծիքի համար: Այդ ստանդարտներով պահանջվում է աուդիտը պլանավորել և անցկացնել՝ ֆինանսական հաշվետվություններն էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ ողջամիտ երաշխիքներ ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում ու համապատասխան ծանոթագրություններում արտացոլված տվյալները հիմնավորող փաստերի ձեռքբերման նպատակով մշակված ընթացակարգեր, որոնց ընտրությունը կախված է խարդախությունների և սխալների հետևանքով ֆինանսական հաշվետվություններում էական խեղաթյուրումների առկայության ռիսկերի վերաբերյալ աուդիտորական գնահատումներից:

ԳԳ: Երևան 0037, Ա. Տիգրանյան 38; Գեռ./Ֆաքս՝ (+374 10) 20 11 51; Էլ-փոստ՝ sosaudit@yandex.ru, sosaudit@web.am
«Յունիբանկ» ՓԲԸ; հ/հ 241061006276

38 A. Tigranyan, Yerevan 0037; RA; Tel/fax: (+374 10) 20 11 51; E-mail: sosaudit@yandex.ru, sosaudit@web.am
"Unibank" CJSC; CA 241061006276

Ռիսկերի գնահատումները կատարելիս աուդիտորը մշակում է համապատասխան ընթացակարգեր՝ ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության գնահատման, և ոչ՝ ընկերության ողջ ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք կազմելու, համար: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների և ղեկավարության կողմից կատարված գնահատումների, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ համապատասխան աուդիտորական ապացույցներ մեր կարծիքն արտահայտելու համար:

Կարծիք

Մեր կարծիքով կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության ֆինանսական վիճակը, ինչպես նաև նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքները և դրամական հոսքերը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Հաշվապահական Հաշվառման Ստանդարտների:

8 ապրիլի 2011թ.
ՍՕՍ-Աուդիտ ՍՊԸ



Գ. Բախչատրյան
Գնել Խաչատրյան
Աուդիտոր